



666

Հյուգո

Աղբան Տարդի

Թ - 1912



1009
1452003
ՍՂԻԱՏ ՄԱՐԻԻԿ

Գրքի մեկ կողմ

Թարգմ. Ս. Նրզնիկյան

№ 13

ԹԻՖԼԻՍ
Տպարան «ՀԵՐՄԷՍ» Գրաֆիկայի փող. 6.
1912

848

Z-66

6069

ԱՂՔԱՏ ՄԱՐԴԻԿ

Մութ և փոթորկալից գիշեր է: Ձկնորսի աղքատիկ խրճիթում, կրակի մօտ, նստած է Ժաննին և կարկատում է կոշտ քաթանից-մաշուած առագաստը: Նա լսում է, ինչպէս սուլում և դռում է քամին, ինչպէս անձրևը թմբկահարում է պատուհանները, ինչպէս աններդաշնակ կերպով ճրնգճրնգացնում են ջրի ալիքները, ճգփալով և փշրուելով ափերի մօտ... Դուրսը չտեսնուած մութն է և սառը: Ձկնորսի աղքատիկ խրճիթը տաք է և դուրալի: Հողէ յատակը մաքուր աւելած է. վառարանում ճայթում է ցախը ու բոցավառում է կրակը, իսկ թարեքում փայլում են մաքուր լուացած ամանները: Սենեակի խորքում հին մահճակալն է սպիտակ վարագոյրով ծածկած ու յատակին գցած մեծ դոշակի վրայ քաղցր քնած են նրա հինգ փոքրիկ երեխաները, որոնց

նանիկ է ասում փոթորկոտ ովկիանոսը: ժաննին նստած է կրակի մօտ և կարկատում է մաշուած առագաստները: Նրա ամուսինն այժմ ծովումն է. նա գնացել է ձուկ որսալու:

Սոսկալի է ծովը դուրս գալ այդ մութ, ցուրտ և մառախլապատ գիշերը. բայց դէ ինչ անել. խօ չի կարելի թողնել ընտանիքն անտէր, անտիրական աշխարհի երեսին: Մանկութիւնից նա ընտելացել է ովկիանոսին և բացի ձկնորսութիւնից չի պարապել ուրիշ ոչ մի գործով. ու թէև երկիւղալի ու յամառ է ովկիանոսը, բայց այսպէս թէ այնպէս էլի նա է, որ կերակրում է և նրան և ժաննին և բոլոր փոքրեթիւն, որոնք թափուած են հին դոշակի վրայ:

Պաղաղ լինի թէ մառախլապատ, ձկնորսը ամեն երեկոյ իր նաւակով ուղևորւում է ծովը իր բաղդը փորձելու: Այդ այնքան էլ դիւրին չէ. հեշտ է արդեօք փնտրել այդ ահագին ջրի մէջ այն կախարդուած արդիւնաւոր տեղերը, որտեղ հաւաքւում ու դան են անում արծաթեայ թեփերով ծածկուած ձկները: Դրա համար ինչքան լաւ պէտք է ճանաչել ովկիանոսը, ինչպէս պէտք է ի նկատի առնել հողմը և մակընթացութիւնը:

Ձուկը յանդուգն է. նրա համար ահռելի չեն ալիքներն ու ապառաժները, նա մտնում է ամենավտանգաւոր տեղերը, որտեղ եփւում ու պճպճում են կոհակները: Եւ ահա համարձակ ձկնորսը գնում է դէպի ապառաժները:

Սառը և կանաչ ալիքները բարձրանում են նրա շուրջը, խորասուզուող նաւակին այս ու այն կողմը շարտելով ջրի ցալքունը խփում է նրա երեսին, բոլոր իրերը ճռնչում են, քամին ուռցնում է մոխրագոյն առագաստները...

Իսկ ժաննին նստած է տանը, կարկատում է պատռտուած ցանցը և հին առագաստները ու ձկնապուր է պատրաստում ընթրիքի համար, և երեսանցը կերակրելուց ու բնեցնելուց յետոյ երկաթ, շատ երկար աղօթում է... Նրան լսելի է ովկիանոսի թնդիւնն ու քամու շառաչիւնը: Երբեմն նրա ականջին է հասնում ուրուրի սուր ձայնը... Իսկ անձրևը գալիս է, հա գալիս: Ժաննին երկիւղի մէջ է: Նրան երևում են նաւաբեկման սոսկալի պատկերներ, ժայռերին դիպչող ու ջարդուող նաւեր, խեղդուող նաւաստիներ... Ահռելի է...

Փայտեայ հին ժամացոյցը իր խոպոտ ձայ-

նով հաւասար բաղխում է տիկ-տակ...

Երեխաները քնած են...

Ժաննին խորասուզւում է մտածմունքների մէջ:

Այո, նրանք հեշտ չեն ապրում. ամուսինն իր կեանքը չխնայելով քամուն և ցրտին մտնում է ծովը, ենթարկում է իրան ամեն բոպէ հազարաւոր վտանգների, իսկ Ժաննին առաւօտեանից մինչև երեկոյ նստած է աշխատանքի: Եւ ի՞նչ: Մեծ է արդեօք նրանց վաստակը: Նրա փոքրիկ երեխաները ամառ թէ ձմեռ վազվզում են բոբիկ ոտքերով. ցորենի հացի մասին նոյնիսկ աւելորդ է մտածել,—լաւ է, երբ հաճարինն էլ բաւականանում է: Ուղիղ է, լինում է երբեմն և ձուկը: Ելի փառք Աստծոյ, որ երեխաները առողջ են, իսկ եթէ Աստուած մի արասցէ, նըրանցից մէկն ու մէկը հիւանդանայ... ինչ կը լինի այն ժամանակ... Օ՛, Տէր Աստուած, ինչպէս զոռում է ովկիանոսը ու փչում քամին: Ո՞րտեղ է այժմ նա: Ո՞րտեղ է իմ խեղճ ամուսինը: Պահպանիր նրան Տէր Աստուած, ողորմիր և ազատիր...

Խեղճ նաւաստիների մայրեր ու կանայք:

Դժուար է ծովում թողնել սիրեցեալ ամուսիններին, ծնողներին, որդեկերանցն ու եղբայրներին: Ծանր է նրանց անյայտութեան լուրն առնելը, ծանր է նոյնիսկ մտածել, որ նրանք ովկիանոսի իշխանութեան տակ են, այդ սառը, դաժան և հզօր հրէշի, և որ այդ հրէշի հետ կռուելու համար նրանք ոչինչ չունին, բացի մի քանի տախտակներից և խղճուկ քաթանի կտորներից: Եւ ոչ մի բոպէ չի կարելի համոզուած լինել, որ նրանք ողջ են ու անվնաս, որ նրանց ոչնչանալ չի սպառնում: Ի՞նչպէս իմանալ: Գուցէ փոթորիկը ջարդել է նաւը, ինչպէս տաշեղ շարտել է նրան դէպի ալիքները... Խեղճ մայր և խեղճ կին, լացիւր, կոտորիւր ձեռքերդ, վազիր ծովի ափ, նայիր հեռուն... Ահա նա, այս անյատակ ովկիանոսը—այս անդունդը իր մութ և հոգեկոյ ալիքներով:

Կոհակները աճում են, հա աճում... Պաղատիր, ձայն տուր նրան. «Օ՛, խնայեցէք, պահպանեցէք, վերադարձրէք նրան ինձ»... Ովկիանոսը քեզ պատասխան չի տալ:

Թշուառ Ժաննին աւելի է ախրում ու տրտմում: Նրա ամուսինը բոլորովին միայնակ, միայ-

նակ է բաց ծովում այս մութ և փոթորկալից գիշերը: Նա օգնականներ չունի: Երեխաները դեռ ևս փոքրը են: Խեղճ ժաննի, դու խաբում ես քեզ, ասելով թէ՝ «Ահա, եթէ նրանք մեծացած լինէին, կօգնէին իրանց հօրը»։ մի ասիր այդպէս, կրմեծանան նրանք, կերթան իրանց հօր հետ, և դու լաց լինելով կասես. «Ա՛խ, երանի նրանք փոքր լինէին և ինձ հետ տանը նստէին»։

Մտածմունքից արթնանալով, ժաննին վեր կացաւ, գլուխը փաթաթեց, վառեց լապտերը և դուրս եկաւ փողոց: Նա ուզում էր տեսնի՝ չի՞ վերադառնում արդեօք իր ամուսինը, հանգիստ է արդեօք ծովը, վառուած է և լոյս է տալիս արդեօք փարոսի լամպան:

Մութն է: Գալիս է բարակ անձրև: Ամբողջ գիւղը քնած է: Ճրագները հանգցրած են: Գիւղի ծայրում, ովկիանոսի ափին, կանգնած է հին, կիսակործան մի խրճիթ ծռուած սև պատերով ու քայքայուած դռնով: Իւրաքանչիւր քամու ժամանակ դուռը ճրոնչում է և թխթխկում, կարծես հառաչում է: Քամին աւելի կատաղի ընկնում է այս աղքատիկ խրճիթի վրայ, կարծես ուզում է պոկել ու փախցնել նրան. իսկ դուռը

ճոնչում ու հառաչում է և փտած ծղնոտը տանիքում խշխշում, կարծես պաղատում է որ խնայի իրեն: ժաննին կապեց խրճիթի շէմքին ու նայեց ծռուած պատուհանից: Խրճիթը մութն է: «Պէտք է նայել խեղճ հիւանդին—մտածեց նա—ես բոլորովին մոռացել եմ նրա մասին: Ամուսինս ասում էր, որ երէկ նա վատ էր: Է՛հ, այս խեղճն էլ բոլորովին միայնակ է, ոչ ոք չունի, որ մտիկ տայ նրան»։

Եւ ժաննին ծեծեց դուռը, ականջ դրեց...

Խրճիթում լռութիւն է տիրում: Ոչ ոք չի պատասխանում:

«Թշուառ հիւանդ—շէմքումը կապած մտածում էր ժաննին—ինչպէս կարող ես հիւանդանալ, երբ դու ինքդ պէտք է պահես ընտանիքդ: Ասենք նա միայն երկու երեխայ ունի, բայց չէ որ նա որբւայրի կին է և բոլոր աշխատանքն ու չարչարանքը միայն նրա վրայ է ծանրացած. իսկ այստեղ կրկին հիւանդութիւն: Է՛հ, ծանր է, արգահատելի»։

Նա նորից և նորից ծեծեց դուռը: Դարձեալ պատասխան չկայ:

—Էյ, հարևանուհի—կանչեց ժաննին ու մտածեց.

«Ամա թէ քնել է հա՛, չես էլ կարող զարթեցնել»։ Քամին փչում է առաջուայ նման. ժաննին սկսում է դողալ ցրտից ու խոնաւութիւնից։ Նա արդէն ուզում էր տուն վերադառնալ, յանկարծ ուժգին քամին, որ քիչ էր մնում խլէր նրա թաշկինակը, թափահարեց հին դուռը և նա ճըռնչալով բացուեց։

Ժաննին շէմքից անցաւ ու ներս մտաւ։ Նրա լապտերը լուսաւորում էր տխուր և անմուռնչ սենեակի ներքին մասը։ Այստեղ նոյնպէս խոնաւ էր և ցուրտ, ինչպէս և փողոցում։ Այարդ երևում էր, որ սենեակը վաղուց է չի տաքացրած։ Տանիքի շատ տեղերից անձրևը թափւում էր ինչպէս մաղի ծակերից. պատի մօտ, ուղիղ դռան դիմաց, մի փոքրիկ ծղնոտի կիտուկի վրայ, ընկած էր մեռած որբւայրի կնոջ դիակը։ Նրա գլուխը յետ էր ընկած. սառած և կապտած գէմքին ու չփակուած բերանի վրայ երևում էր զարհուրանքի և յուսահատութեան արտայայտութիւնը... Մփրթնած քարացած ձեռքը կարծես թէ մի բանի համար մեկնելիս՝ վայր էր ընկել ու կախւել ծղնոտից։ Մօր դիակից երկու քայլ հեռու, աղքատիկ օրօրոցում, երկու փոքրիկ երեխաները

գունատ, այդ խուճուճ հաստաթշիկները խարտեաշ գլխիկները կծկելով՝ և մէկը միւսին հուժ տալով—չնայած մահուան մօտիկութեան ու քամու մոնչիւնին՝ քնած են պինդ և անվրդով։

Մայրը մահուան վերջին բոպէին կարողացել էր նրանց տոտիկները փաթաթել հին թաշկինակով և ծածկել նրանց իր շորերով, որպէսզի նրանք չըզգան ցուրտն ու խոնաւութիւնը։ Երեխաներից մէկն իր թմբիկի թաթիկն էր դրել թշի տակը, միւսը՝ երեսը եղբօր վզովն էր փաթաթել։ Նրանց շնչառութիւնը հանգիստ էր և հաւասար, թւում էր, թէ նրանք այնպէս ամուր և քաղցր են քնած, որ ոչ մի բան չի կարող զարթեցնել նրանց։ Իսկ հողմը բոլորովին չի հանգստանում, վզդում է և մոնչում... Մերթ ընդ մերթ անձրևի կաթիլները, որ թափւում էին տանիքից, ընկնում էին հանգուցեալի ճակատին, գալարւում սառած այտերին, կարծես արցունքներ լինէին վշտահար, այլանդակուած դէմքին...

Ժաննին վազում է դէպի տուն։ Նա իր վերարկուի տակ ինչոր տանում է։ Նրա սիրտը զարկում է ուժգին, նա չի համարձակւում յետ նայել, կարծես թէ մէկը վազում է նրա յետևից։

Մի բան խօսի՞ր գողացել հանգուցեալից:

Տուն հասնելով, նա իր բեռը դնում է մահճակալի վրայ և շտապով քաշում վարագոյրը: Յետոյ նա վերցնում է աթոռը, դնում մահճակալի մօտ և նստում, գլուխը մահճակալի անարին խոնարհեցնելով: Նա գունատ է և յուզուած: Թւում է, թէ մի ինչ որ բան տանջում է նրան ու խիղճը կշտամբում է մի ինչ որ բանի համար: Դուրս են թռչում նրա բերնից կցկտուր բացագանչութիւններ. «Խեղճ ամուսինս, ինչ կասի նա... Այս ինչ արի ես. կատակ է արդեօք նրա համար նրանց հոգսը... Այս նա է... Ոչ, դեռ ոչ: Եւ ինչու համար վերցրի... Եթէ նա ինձ յանդիմանի դրա համար—արժանի եմ, այդպէս է պէտք: Ահա նա... Ոչ... դէհ, աւելի լաւ»... Դուռը ձուաց, կարծես մէկը ներս մտաւ: Ժաննին ցնցւեց, վերկացաւ աթոռից:

«Ո՛չ, դարձեալ ոչ ոք. Տէր Աստուած, ինչու արի այդ... Այժմ ինչպէս պէտք է նրա աչքերին նայեմ...» Եւ Ժաննին մտաւանջուելով, երկար ժամանակ նստում է մահճակալի մօտ, խորասուզած մտածմունքների մէջ:

Անձրեր դադարեց. լուսացաւ, բայց վզվզում

է քամին և ովկիանոսը ոռնում առաջուայ նման: Յանկարծ դուռը բացւեց, սենեակը ձեղքեց ծովի օդի թարմ հոսանքը և բարձրահասակ թխադէմ մի ձկնորս քարշ տալով իր յետևից թաց և պատռած ցանցը ներս մտաւ խրճիթն ասելով.

— Ահա և ես, Ժաննի:

— Ահ, այդ դու ես—ճշում է Ժաննին, վագում դէպի նա, զրկում է և լուծւում, չհամարձակուելով աչքերը դարձնել դէպի նա:

— Էհ, Ժաննի, վատ էր, սիրելիս, շատ վատ, ամա թէ գիշեր էր հա՛. երկիւղալի...

— Այո՛, այո՛, եղանակը սոսկալի էր. բայց ինչպէս է որսդ:

— Անյաջող, բոլորովին անյաջող: Ոչինչ չըբռնեցի, միայն ցանցս քրքրուեց: Վատ է, շատ վատ... Բայց ինչ եղանակ էր, Ժաննի: Այսպիսի գիշեր իմ կեանքումս չեմ յիշում: Քամին գոռում էր ինչպէս սատանայ և մակոյկս շարտում ինչպէս մի զընդակ: Լինում էին ըսպէսներ, երբ ես կարծում էի, թէ թուր կտրուել է և նաւակս գնում է դէպի ծովի յտտակը: Էլ ինչ ձուկը բռնել: Փառք Անստոյ, որ էլի սաղ-սալամաթ տուն հասայ: Բայց դու այստեղ առանց

ինձ ի՞նչ էիր անում—շարունակեց ձկնորսը ցանցը ներս քաշելով ու տաքանալով վառարանի մօտ։

—Ես...—ասաց ժաննին սփրթնելով—էլ ի՞նչ ես... նստած, կարում էի.. Գամին այնպէս էր փչում, որ ես սոսկում էի։ Ես քո մասին էի մտածում ու վախենում։

—Այո, այո, փնթփրնթաց ամուսինը—եղանակը ստատանայական էր, անտանելի, բայց դէ ի՞նչ արած։

Երկուսն էլ լռեցին։

Յետոյ ժաննին, անվճռականօրէն, դողալով և վախելով, ինչպէս յանցաւոր, ասաց.

—Հա, ճիշտ որ, գիտե՞ս. հարևանուհի Սիմընը վախճանուել է։ Չգիտեմ, երբ է վախճանուել, երևի երէկ դեռ, քո այնտեղ գնալուց յետոյ։ Յաւում եմ խեղճ-թշուովին։ Դառն էր նրա համար մեռնել այդ տեսակ աղքատութեան գրկում։ Եւ երեխաների համար, ով գիտէ, որքան էր սիրալը ճմլում։ Չէ՞ որ նա թողել է երկու փոքրիկ երեխաներ, մէկը դեռ ևս չի խօսում, իսկ միւսը հագիւ է չոչ անում...

Ժաննին լռեց։ Ձկնորսը մոայլուեց. նրա բարի և ժպտալից դէմքը լրջացաւ ու մտտտանջուեց։

—Այ քեզ բան,—խօսեց նա վերջապէս ծոծրակը քորելով։—Էհ, եղած-չեղած. հինգ երեխայ ունէինք, այժմ կուսենանք եօթը։ Դէն խօ չենք շարտիլ նրանց, ինչպէս շան ձագերի։ Հէնց որ մեզ քիչ կըղզենք—այժմ է քիչ դժուար։ Էհ, ի՞նչ արած։ Երեխաները փոքր են, ի՞նչպէս կարող են նրանք իրանց կերակրել... Գիտե՞ս ինչ, ժաննի, վաղիւր շուտով նրանց մօտ և բեր այստեղ, եթէ նրանք զարթնել են. երևի կըվախենան հանգուցեալից։ Լսում եմ ինչպէս քամին բախում է դուռը,—կարծես նրանց հանգուցեալ մայրն է բախողը։ Ապաստարան տանք նրա երեխանցը, ժաննի։ Նրանք կըբարեկամանան մեր երեխանց հետ և կըլինեն ինչպէս հարազատ եղբայրներ։ Երեկոները, տօներին, մեզ մօտ աւելի աղմկալի և ուրախ կլինի քան առաջ։ Նրանք կըխնդան, կըխաղան, կըբարձրանան իմ ծնկներէս մեր երեխաների հետ միասին։

Իսկ երբ Աստուած կըտեսնի, որ պէտք է կերակրել էլի երկու երեխի, նա ինձ յաջող որս կուղարկի։ Առաւօտները վաղ դուրս կերթամ, երկար կը մնամ ծովում, այլևս զինի չեմ խմիլ...


էն, ինչ անենք, մի կերպ եօլա կըտանենք: Դէ-
պնա շուտով:

Բայց ժաննին տեղից չէր շարժուում:

— Ի՞նչու ես լուում. դո՞ն չե՞ս: Վախենում ես,
չե՞ս ուզում նրանց վերցնել: Ի՞նչ է պատահել
քեզ, ժաննի:

Երջանիկ և ուրախացած ժաննին լուռ ու
մունջ տարաւ ամուսնուն մահճակալի մօտ և յետ
քաշեց վարագոյրը...

Այնտեղ պառկած էին վախճանուած հարևա-
նուհու երեխաները և քնած էին հանգիստ ու
անվրդով...



0004765

666

2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0004765

